

# Հայտարարություն խորհրդարանական լրագրողների նկատմամբ ՀՀ Ազգային ժողովի չորս պատգամավորների վիրավորական պահվածքի կապակցությամբ

Մայիսի 26, 2014

Անցած շաբաթ՝ մայիսի 19-ից 22-ը կայացած ՀՀ Ազգային ժողովի քառօրյա նիստը առանձնացավ լրագրողների նկատմամբ որոշ պատգամավորների ակնհայտ ագրեսիվությամբ և անպարկեշտ վերաբերմունքով :

Այսպես, մայիսի 19-ին, երբ «Ազատություն» ռադիոկայանի թղթակիցը փորձեց իմանալ [ՀՀԿ-ական Շուշան Պետրոսյանի կարծիքը](#)՝ օրեր առաջ Երեւանի «Վերնիսաժ»-ի մոտ տեղի ունեցած հրաձգության մասին, վերջինս լրագրողներին պատասխանելիս ասաց. «Դուք բոլորդ անբարոյականներ եք»:

Մայիսի 21-ին ծայրահեղ գոեհկություն եւ լրագրողին ճնշելու մտայնություն դրսևորեց ԲՀԿ-ական Մելիք Մանուկյանը, որին մոտեցած «Հրապարակ» թերթի թղթակիցն ուզում էր պարզել, թե ինչ կարծիքի է նա կառավարության ներկայացրած ծրագրի մասին:

Մյուս օրը՝ մայիսի 22-ին, [ՀՀԿ-ական Մհեր Սեդրակյանը փողոցային հայիոյանը](#) հնչեցրեց՝ ի պատասխան Tert.am կայքի լրագրողի հարց ուղղելու փորձին:

Նույն օրը պատգամավոր [Արայիկ Գրիգորյանը, գինովցած վիճակում](#), ակնհայտ անպարկեշտ վարվելակերպ դրսևորեց Fnews.am կայքի կին թղթակցի նկատմամբ:

Այս չորս պատգամավորներից միայն Շուշան Պետրոսյանը փորձեց այլ ՋԼՄ-ների միջոցով որոշ պարզաբանումներ ներկայացնել, սակայն դրանք համոզիչ չէին: Իսկ «Ազատություն» ռադիոկայանի թղթակցին ներողություն հայտնելու նրա պատրաստակամությունն ամենեւին էլ համարժեք չէր լրագրողներին հասցեագրված արտահայտությանը: Ինչ վերաբերում է մյուս միջադեպերին, ապա ո՛չ Մելիք Մանուկյանը, ո՛չ Արայիկ Գրիգորյանը, ո՛չ էլ Մհեր Սեդրակյանը ներողություն հայցելու որեւէ քայլ չարեցին: Ի դեպ, վերջինս 2012թ. դեկտեմբերին [նմանատիպ վարք դրսևորեց](#) նաև «Ա1+»-ի թղթակցի հետ շփվելիս:

Դատապարտելի համարելով հիշյալ պատգամավորների ագրեսիվ եւ անպարկեշտ վարվելակերպը՝ մենք՝ ներքոստորագրյալներս, պահանջում ենք.

– ԱԺ ՀՀԿ եւ ԲՀԿ խմբակցություններից՝ քննարկման առարկա դարձնել այս միջադեպերը եւ իրենց գնահատականները ներկայացնել հանրությանը,

– ՀՀ դատախազությունից՝ սույն փաստաթուղթը Մհեր Սեդրակյանի մասով համարել հաղորդում հանցագործության մասին, եթե վերջինս հրապարակավ ներողություն չխնդրի Tert.am-ի լրագրողից:

Այդ միջադեպերից տուժած եւ անհարգալից վերաբերմունքի արժանացած լրագրողներին կոչ ենք անում համապատասխան դիմումներ ներկայացնել ԱԺ Էթիկայի հանձնաժողով՝ վերոհիշյալ պատգամավորների վարքը քննարկելու համար:

Միաժամանակ լրագրողական հանրությանն առաջարկում ենք ցուցաբերել մասնագիտական համերաշխություն եւ, բարոյապէս աջակցելով գործընկերներին, անհանդուրժող վերաբերմունք արտահայտել պատգամավորների անպարկեշտությունների առնչությամբ:

**ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**

**ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ**

**ՄԵԴԻԱ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ (ՆԱԽԿԻՆ «ԻՆՏԵՐՆՅՈՒՄ»)**

**ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ «ԱՍՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ**

**ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ-ՀԱՅԱՍՏԱՆ**

**ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ**

**«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՀԿ**

**ԳՈՐԻՍԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ**